Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ ԹԻՎ 278-Ա-281-Ա, ԱՊՐԻԼԻ 15-Ի ԹԻՎ 282-Ա, ԱՊՐԻԼԻ 19-Ի ԹԻՎ ԹԻՎ 283-Ա-290-Ա ԵՎ ԱՊՐԻԼԻ 20-Ի ԹԻՎ ԹԻՎ 291-Ա-300-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 278-Ա որոշման նախաբանում ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման դրույթներին կատարված հղումը սխալ է գրառված: Անհրաժեշտ է «N 912-Ն որոշման» թվից և բառից հետո գրառել «1-ին կետով հաստատված հավելվածի» թիվը և բառերը:

Որոշման վերնագիրն անհրաժեշտ է համապատասխանեցնել որոշման 1-ին կետին, իսկ 1-ին կետը՝ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետին:

Թիվ թիվ 279-Ա և 281-Ա որոշումների բովանդակությունների մեջ տրամադրված հասցեները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթներին:

Թիվ 280-Ա որոշման նախաբանում «հաստատված» բառը փոխարինել «սահմանված» բառով:

Թիվ 282-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջին, համաձայն որի՝ արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների հապավումներ: Բացի այդ, որոշման նախաբանում նշված «5-րդ մասի» թիվը և բառը փոխարինել «2-րդ և 5-րդ ենթակետերի» թվերով և բառով:

Թիվ 283-Ա որոշման վերնագիրը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջին, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտի վերնագրում բերվում է միայն փոփոխվող կամ գործողությունը դադարեցվող իրավական ակտի կրճատ անվանումը: Բացի այդ, որոշման վերնագիրն անհրաժեշտ է համապատասխանեցնել նաև որոշման 2-րդ կետին, իսկ 2-րդ կետը՝ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետին:

Որոշման 1-ին կետն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասին, համաձայն որի՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, ակտի վերնագիրը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը:

Թիվ 284-Ա որոշման վերնագիրն անհրաժեշտ է համապատասխանեցնել որոշման 1-ին կետին, իսկ 1-ին կետը՝ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետին:

Թիվ 285-Ա որոշման նախաբանում ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման դրույթներին կատարված հղումը սխալ է գրառված: Անհրաժեշտ է «N 912-Ն որոշման» թվից և բառից հետո գրառել «1-ին կետով հաստատված հավելվածի» թիվը և բառերը:

Որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն չի համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետին:

Թիվ թիվ 286-Ա, 287-Ա և 288-Ա որոշումների նախաբաններում «հաստատված» բառը փոխարինել «սահմանված» բառով: Բացի այդ, որոշումների բովանդակությունների մեջ տրամադրված հասցեները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթներին:

Թիվ 289-Ա որոշման վերնագիրը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասին: Որոշման նախաբանում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի անվանումը թերի է գրառված, ինչպես նաև 33-րդ հոդվածի 1-ին մասին կատարված հղումը սխալ է, քանի որ նշված իրավական ակտով համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման եռամսյակային համամասնություններ չի սահմանել: Բացի այդ, հղումը պետք է կատարվեր «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի ոչ թե 3-րդ մասին, այլ՝ 1-ին մասի 1-ին կետին, քանի որ որոշմամբ լրացումներ չեն կատարվել՝ նոր բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր, պարբերություններ, նախադասություններ, բառեր, թվեր կամ կետադրական նշաններ լրացնելու միջոցով:

Որոշման բովանդակությունն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներին, համաձայն որոնց՝ ենթաօրենսդրական իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, ակտի վերնագիրը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը:

Որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետում «193347.0» թվից հետո գրառված «թողնել անփոփոխ» բառերը փոխարինել «փոխարինել «192847.0» թվով» բառով և թվով:

Թիվ 290-Ա որոշման վերնագրում և բովանդակության մեջ անհրաժեշտ էր գրառել գործուղվող անձի անունը, ազգանունը:

Որոշման նախաբանում հղումը թերի է կատարված: Անհրաժեշտ էր հղում կատարել ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման 1-ին կետի ա) ենթակետով հաստատված N 1 հավելվածի 2-րդ, 3-րդ, 7-րդ և 21-րդ կետերին:

Որոշման 1-ին կետն անհրաժեշտ է խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանին 2022 թվականի ապրիլի 20-ից 21-ը ծառայողական մեքենայով գործուղել քաղաք Երևան՝ «Հայաստանի համայնքների միություն» հասարակական կազմակերպություն, Հայաստանի համայնքների միության հանրապետական խորհրդի նիստին մասնակցելու համար:»:

Թիվ թիվ 291-Ա, 292-Ա, 294-Ա, 296-Ա, 297-Ա և 299-Ա որոշումների բովանդակությունների մեջ տրամադրված հասցեները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետին:

Թիվ 293-Ա որոշման նախաբանում անհրաժեշտ էր հղում կատարել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 7-րդ կետի ոչ թե 5-րդ մասին, այլ՝ 5-րդ ենթակետին:

Որոշման 2-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներին, համաձայն որի՝ անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը:

Թիվ 295-Ա որոշման վերնագիրն անհրաժեշտ է համապատասխանեցնել որոշման 1-ին կետին, իսկ 1-ին կետը՝ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետին:

Թիվ 298-Ա որոշման վերնագրում և բովանդակության մեջ անհրաժեշտ է նշում կատարել անշարժ գույքի սեփականատիրոջ վերաբերյալ:

Թիվ 300-Ա որոշման նախաբանում անհրաժեշտ էր հղում կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետին, համաձայն որի՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով՝ համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը, հետևաբար՝ անհրաժեշտ էր հղում կատարել նաև ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու համապատասխան որոշմանը:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
24.05.2022թ.